ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 823-Ա/2 «27» հուլիսի, 2018 թ.

«ԱՐՑԱԽԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ-2018» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի» 3-րդ կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Կազմակերպել ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում անցկացվող «Արցախի հետ համագործակցության ծրագիր-2018» մրցույթը:
2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Մրցույթի արդյունքների հաստատման և գիտական թեմաների ցանկերում փոփոխությունների կատարման լիազորությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանին:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանին:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԿԳ նախարարի
2018 թ. հուլիսի 27-ի
N 823-Ա/2 հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեն գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կազմակերպում է «Արցախի հետ համագործակցության ծրագիր - 2018» **ՄՐՑՈՒՅԹԸ**:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտե՝ մինչև 2018 թվականի սեպտեմբերի 14-ը ներառյալ:

Մրցույթի հրավերի փաթեթը զետեղված է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի ինտերնետային կայքում՝ www.scs.am:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությունում՝ աշխատանքային օրերին ժամը 14:00 - 17:00 (հեռախոս՝ 21-01-40*113, 21-01-40*116):

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության

նախարարության գիտության կոմիտե

Հավելված N 2
ՀՀ ԿԳ նախարարի
2018 թ. հուլիսի 27-ի
N 823-Ա/2 հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՎԵՐ
«ԱՐՑԱԽԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ-2018» ՄՐՑՈՒՅԹԻ

1. «Արցախի հետ համագործակցության ծրագիր-2018» մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) և Արցախի Հանրապետության կրթության և գիտության նախարարության միջև 2009 թվականի նոյեմբերի 15-ին կնքված «Գիտատեխնիկական ոլորտում համագործակցության մասին» պայմանագրի և 2010 թվականի նոյեմբերի 29-ին կնքված «Արցախի գիտաշխատողների հետազոտությունների աջակցության դրամաշնորհների տրամադրման մասին ծրագրի»:

2. Կոմիտեն բնական գիտությունների բնագավառում «Ֆիզիկա և աստղագիտություն» (մասնագիտական դասիչը՝ 1.3), «Քիմիա» (մասնագիտական դասիչը՝ 1.4), «Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ» (մասնագիտական դասիչը՝ 1.5) և «Կենսաբանական գիտություններ» (մասնագիտական դասիչը՝ 1.6) մասնագիտություններով գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար 12 կամ 24 ամիս տևողությամբ դրամաշնորհներ է տրամադրում 3 կամ 4 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի (այսուհետ՝ Խումբ) նախաձեռնությամբ ներկայացված և մրցութային կարգով ընտրված գիտական թեմաներին (այսուհետ՝ Թեմա):

3. Խմբի կազմում ընդգրկվում է գիտական խորհրդատու (այսուհետ՝ Խորհրդատու), Խմբի ղեկավար (այսուհետ՝ Ղեկավար) և 1 կամ 2 մասնակից:

4. Խորհրդատու կարող է հանդիսանալ գիտական աստիճան ունեցող անձը, ով ունի առնվազն 5 տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին 5 տարիների ընթացքում գրախոսվող ամսագրերում հրատարակված առնվազն 5 հոդված:

5. Ղեկավար կարող է հանդիսանալ

- գիտական աստիճան ունեցող անձը, ով ունի առնվազն 5 տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին 5 տարիների ընթացքում գրախոսվող ամսագրերում հրատարակված առնվազն 3 հոդված,
- գիտական աստիճան չունեցող անձը, ով ունի առնվազն 5 տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին 5 տարիների ընթացքում գրախոսվող ամսագրերում հրատարակված առնվազն 5 հոդված:

6. Ղեկավար կարող է հանդիսանալ մինչև 70 տարեկան անձը՝ ում 70 տարին չի լրացել մինչև Մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը:

7. Խմբում պետք է ընդգրկվի մինչև 35 տարեկան առնվազն մեկ մասնակից՝ առնվազն դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի բարձրագույն կրթության որակավորման աստիճան ունեցող կամ մագիստրատուրայի ուսանող:

8. Խորհրդատուն պետք է հանդիսանա Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչ և դրամաշնորհի իրականացման ընթացքում բնակվի Հայաստանի Հանրապետությունում: Խմբի մյուս անդամները (ներառյալ Ղեկավարը) պետք է հանդիսանան Արցախի Հանրապետության մշտական բնակիչներ և դրամաշնորհի իրականացման ընթացքում բնակվեն Արցախի Հանրապետությունում:

9. Խմբի անդամները (ներառյալ Խորհրդատուն և Ղեկավարը) չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացված մեկից ավելի հայտերում:

10. Խմբի անունից հանդես է գալիս միայն Ղեկավարը:

11. Մրցույթին մասնակցելու համար ներկայացնել հետևյալ փաստաթղթերի փաթեթը.

- Ղեկավարի դիմումը (Հավելված N 2.1),
- Մրցույթի մասնակցության հայտը (Հավելված N 2.2)՝ սոսնձված ծրարով,
- Թեմայի իրականացման վայր հանդիսացող գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետ՝ Կազմակերպություն) գիտական (գիտատեխնիկական) խորհրդի եզրակացությունը,
- Խմբում փոխկապակցված անձանց (ընտանիքի անդամներ՝ ծնող, երեխա, եղբայր, քույր, ամուսին) առկայության մասին տեղեկատվությունը՝ Ղեկավարի ստորագրությամբ,
- մինչև 35 տարեկան մասնակցի (մասնակիցների)
  - ✓ ասպիրանտ կամ մագիստրատուրայի ուսանող հանդիսանալու մասին տեղեկանքը, որտեղ նշված են մասնագիտությունը և ուսուցման տարին,
  - ✓ դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի դիպլոմի պատճենը:

12. Պահանջվող փաթեթը, մինչև 2018 թվականի սեպտեմբերի 14-ը ներառյալ, Կոմիտե ներկայացնել առձեռն՝ աշխատանքային օրերին ժամը 10:00-13:00 և 14:00-17:00 (Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22):

13. Հայտը ներկայացնել հայերեն՝ տպագիր և էլեկտրոնային (խտասկավառակ) տարբերակներով:

14. Հայտի տպագիր տարբերակը ներկայացնել A4 ձևաչափի թղթի վրա տպված, 1,5 տողամեջ հեռավորությամբ, 12 չափի «Unicode» տառատեսակով՝ պահպանելով աղյուսակների ամբողջականությունը: Էջերի բոլոր կողմերից թողնել 2,5 սմ լուսանցք և հաջորդաբար համարակալել ներքևի աջ անկյունում: Հայտի էլեկտրոնային տարբերակը ներկայացնել «Microsoft Word» ձևաչափով՝ մեկ ֆայլով, որը չպետք է գերազանցի 1,5 MB-ը:

15. Ղեկավարի ստորագրությունը պետք է լինի Կազմակերպության ղեկավարի կամ գիտական քարտուղարի ստորագրությամբ հաստատված և Կազմակերպության կնիքով վավերացված:

16. Թեմայի ծախսերի նախահաշիվը կազմելիս օգտվել ուղեցույցից (Հավելված N 2.3):

17. Մրցույթի պայմաններին բավարարող հայտերը տրամադրվում են մասնագիտական փորձագիտական խորհրդին (այսուհետ՝ Խորհուրդ)՝ գիտական փորձաքննություն իրականացնելու համար:

18. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են Թեմայի գիտական կամ գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, իրականացման նախադրյալները, Խորհրդատուի, Ղեկավարի և մասնակիցների ձեռքբերումները գիտության տվյալ բնագավառում, նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը նախատեսված հետազոտությունների իրականացմանը, աշխատանքի ծավալի, իրականացման ժամկետների և ծախսերի նախահաշվի հիմնավորվածությունը, գիտության տվյալ մասնագիտության առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

19. Փորձաքննությունն իրականացնելիս Խորհուրդը յուրաքանչյուր հայտի համար լրացնում է Կոմիտեի կողմից սահմանված գիտական փորձաքննության գնահատման թերթիկը (Հավելված N 2.4):

20. Կոմիտեի և Խորհրդի կողմից հայտերի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

21. Խորհուրդը Կոմիտեի նախագահին է ներկայացնում Հայտերի գնահատականների վարկանիշային ցանկը:

22. Կոմիտեի նախագահը, ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Արցախի հետ համագործակցության ծրագիր» ենթածրագրով նախատեսված հատկացումների չափից, հաստատում է ֆինանսավորման երաշխավորվող Թեմաների ցանկը, Ղեկավարների ցուցակը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսվող ֆինանսավորման ծավալը:

23. Կոմիտեն Կազմակերպության ղեկավարին տրամադրում է Կազմակերպությունից ներկայացված և ֆինանսավորման երաշխավորված Թեմաների ցանկը, Ղեկավարների ցուցակը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը:

24. Մրցույթի արդյունքների բողոքարկում չի նախատեսվում:

25. Կազմակերպության տնօրենի (ռեկտորի) և Ղեկավարի հարաբերությունները կարգավորվում են առանձին՝ ծառայությունների մատուցման պայմանագրով, որտեղ նշվում է տնօրենի (ռեկտորի) իրավասությանը թողնված՝ Թեմայի վերադիր ծախսերի չափը: Թեմայի ղեկավարի և մասնակիցների միջև հարաբերությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (քաղաքացիաիրավական):

26. Կոմիտեի, ֆինանսավորման երաշխավորված Թեմայի Խորհրդատուի և Ղեկավարի միջև Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է պայմանագիր՝ **25**-րդ կետում նշված պայմանագրերի առկայության դեպքում:

Հավելված N 2.1
«Արցախի հետ համագործակցության ծրագիր-2018» մրցույթի հրավերի

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անուն հայրանուն)
_____ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

Դ Ի Մ Ո Ւ Մ

Խնդրում եմ ընդունել «Արցախի հետ համագործակցության ծրագիր – 2018» մրցույթի «_____» վերնագրով հայտը:

Դիմող՝ _____ (_____)
(*ստորագրություն*) (*անուն ազգանուն*)

«____» _____ 2018թ.

Հավելված N 2.2
«Արցախի հետ համագործակցության ծրագիր-2018» մրցույթի հրավերի

ՀԱՅՏ

«ԱՐՑԱԽԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ-2018» ՄՐՑՈՒՅԹԻ

Հայտը հանձնված է «_____» _____ 2018թ. Ծածկագիր՝ 18AA-_____

(*լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեում*)

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Հայտի

- վերնագիրը

- մասնագիտական դասիչը

- բնույթը, հետազոտության տեսակը՝

հիմնարար		տեսական	
կիրառական		փորձարարական	

2. Հուշող (բանալի) բառեր

3. Խմբի գիտական խորհրդատուի ԱԱՀ (լրիվ)

4. Խմբի ղեկավարի ԱԱՀ (լրիվ)

5. Թեմայի իրականացման վայր հանդիսացող կազմակերպության

- լրիվ, կրճատ անվանումները

- կազմակերպաիրավական ձևը

- հասցեն

- հեռախոսը

- էլեկտրոնային հասցեն

6. Թեմայի կատարման ժամանակահատվածը _____ ամիս

7. Գիտահետազոտական խմբի անդամների թիվը

8. Աշխատանքի վարձատրության (ներառյալ եկամտային հարկը) գումարը

_____ հազար դրամ

9. Վերադիր ծախսերի գումարը _____ հազար դրամ

10. Հայցվող ընդհանուր գումարը _____ հազար դրամ

11. Խմբի գիտական խորհրդատուի ստորագրությունը

12. Խմբի ղեկավարի ստորագրությունը

13. Կազմակերպության ղեկավարի/գիտական քարտուղարի ստորագրությունը

Կ.Տ.

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱ*

* *Համառոտ ներկայացնել նախագծի նպատակները*

ՆԱԽԱԳԻԾ*

---

* *Մինչև 12 էջի սահմաններում ներկայացնել.*

1. խնդրի դրվածքը, դրա արդի վիճակը, թեմայի գիտական նպատակները, հետազոտական ծրագիրը, իրականացման եղանակները, եռամսյակային փուլերը, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները (մինչև 8 էջ): Կիրառական բնույթի հետազոտությունների դեպքում ներկայացնել նաև արդյունքի (արտադրանքի, նմուշի, ալգորիթմի և այլ)

- *նկարագրությունը,*
- *կիրառության ոլորտը,*
- *հիմնական տեխնիկական բնութագրիչները,*
- *մրցակցային առավելությունները,*

2. տվյալ ուղղությամբ խմբի ունեցած ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները (մինչև 2 էջ),

3. օգտագործված գրականության ցանկը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՄԱՍԻՆ

Ազգանուն, անուն, հայրանուն		
Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը		
Կրթությունը (*բուհ, մասնագիտություն, մասնագիտացում*)		
Գիտական աստիճանը, կոչումը		
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը, վայրը		
Աշխատանքի վայրը, պաշտոնը		
Հեռախոս (*աշխատանքային, բջջային*)		
Էլեկտրոնային հասցե		
Հրատարակված	գիտական հոդվածներ (*քանակը*)	
	մենագրություններ (*քանակը*)	
2013-2018 թվականներին հրատարակված գիտական հոդվածները (*հեղինակներ, վերնագիր, ամսագիր, տարի, հատոր, էջեր*)	1)	
	2)	
	3)	
	4)	
	5)	
	(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)	
Ստացված օտարերկրյա դրամաշնորհները	1)	
	2)	
	(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)	

_____

(*գիտական խորհրդատուի ստորագրությունը*)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ

Ազգանուն, անուն, հայրանուն	
Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը	
Կրթությունը (*բուհ, մասնագիտություն, մասնագիտացում*)	
Գիտական աստիճանը, կոչումը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը, վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոս (*աշխատանքային, բջջային*)	
Էլեկտրոնային հասցե	
Հրատարակված	գիտական հոդվածներ (*քանակը*)
	մենագրություններ (*քանակը*)
2013-2018 թվականներին հրատարակված գիտական հոդվածները (*հեղինակներ, վերնագիր, ամսագիր, տարի, հատոր, էջեր*)	1)
	2)
	3)
	4)
	5)
	(*անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր*)
Ստացված օտարերկրյա դրամաշնորհները	1)
	2)
	(*անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր*)

_____

(*խմբի ղեկավարի ստորագրությունը*)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍԻՆ*

Ազգանուն, անուն, հայրանուն	
Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը	
Կրթությունը (*բուհ, մասնագիտություն, մասնագիտացում*)	
Որակավորումը (*դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս*)	
Գիտական աստիճանը, կոչումը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը, վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոս (*աշխատանքային, բջջային*)	
Էլեկտրոնային հասցե	
Նախագծին առնչվող գիտական հրապարակումները (*հեղինակներ, վերնագիր, ամսագիր, տարի, հատոր, էջեր*), 5-ից ոչ ավելի	1)
	2)
	3)
	4)
	5)

_____

(*մասնակցի ստորագրությունը*)

* *Լրացվում է յուրաքանչյուր մասնակցի համար*

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Ծածկագիր՝ 18AA-_____

(լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեում)

հազար դրամ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ *(ներառյալ եկամտային հարկը)*									
ԱԱՀ	2018 թ.			2019 թ.			2020 թ.		
	ամսական	ամիսների քանակը	ընդհանուր գումարը	ամսական	ամիսների քանակը	ընդհանուր գումարը	ամսական	ամիսների քանակը	ընդհանուր գումարը
1)									
2)									
3)									
4)									
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ									

ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում			
1. ՍԱՐՔԵՐ, ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ *(150,0 հազար ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը հիմնավորվել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ)*	2018 թ.	2019 թ.	2020 թ.
1)			
2)			
…..			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ *(հիմնավորել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ)*	2018 թ.	2019 թ.	2020 թ.
1) տեղական գործուղումների տրանսպորտային ծախսեր			
2) տեղական գործուղումների օրապահիկ			
3) տեղական գործուղումների գիշերավարձ			
4) օտարերկրյա գործուղումների տրանսպորտային ծախսեր			
5) օտարերկրյա գործուղումների օրապահիկ			
6) օտարերկրյա գործուղումների գիշերավարձ			
7) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (վիզա կամ այլ վճարումներ)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
3. ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ	2018 թ.	2019 թ.	2020 թ.
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ	2018 թ.	2019 թ.	2020 թ.

Խմբի գիտական խորհրդատու՝ _____ _____
(*ստորագրություն*) (*ԱԱՀ*)

Խմբի ղեկավար՝ _____ _____
(*ստորագրություն*) (*ԱԱՀ*)

Կազմակերպության ղեկավար՝ _____ _____
(*ստորագրություն*) (*ԱԱՀ*)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝_____ _____
(*ստորագրություն*) (*ԱԱՀ*)

Կ.Տ.

* *Օգտվել ծախսերի նախահաշիվը կազմելու ուղեցույցից (Հավելված N 2.3)*

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

* *Բացատրել և հիմնավորել ծախսերի նախահաշվի բոլոր կետերը*

Հավելված N 2.3

«Արցախի հետ համագործակցության ծրագիր-2018» մրցույթի հրավերի

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ ԿԱԶՄԵԼՈՒ

1. Ծախսերի նախահաշիվը ներկայացնել առանձին տարիների համար՝ պահպանելով հետևյալ համամասնությունը.

- 12 ամիս տևողությամբ թեմաների համար.
  - 2018 թվականին՝ դրամաշնորհի տարեկան ընդհանուր գումարի 1/3-ը,
  - 2019 թվականին՝ դրամաշնորհի տարեկան ընդհանուր գումարի 2/3-ը,
- 24 ամիս տևողությամբ թեմաների համար.
  - 2018 թվականին՝ դրամաշնորհի տարեկան ընդհանուր գումարի 1/3-ը,
  - 2019 թվականին՝ դրամաշնորհի տարեկան ընդհանուր գումարը,
  - 2020 թվականին՝ դրամաշնորհի տարեկան ընդհանուր գումարի 2/3-ը,

2. Դրամաշնորհի 12-ամսյա առավելագույն գումարը նախատեսել.

- 4 անձից բաղկացած խմբի համար՝ 4 600 000 *(չորս միլիոն վեց հարյուր հազար)* ՀՀ դրամ,
- 3 անձից բաղկացած խմբի համար՝ 3 450 000 *(երեք միլիոն չորս հարյուր հիսուն հազար)* ՀՀ դրամ:

3. Ծախսերի նախահաշվի «Աշխատանքի վարձատրություն» հոդվածը կազմելիս աշխատանքի ամսական վարձատրության միջին հաշվարկային չափն ընդունել 70 000 (*յոթանասուն հազար*) ՀՀ դրամ, ներառյալ եկամտային հարկը:

4. Աշխատանքի վարձատրության համար նախատեսվող 12-ամսյա առավելագույն գումարը նախատեսել.

- 4 անձից բաղկացած խմբի համար՝ 3 360 000 (*երեք միլիոն երեք հարյուր վաթսուն հազար*) ՀՀ դրամ,
- 3 անձից բաղկացած խմբի համար՝ 2 520 000 (*երկու միլիոն հինգ հարյուր քսան հազար*) ՀՀ դրամ:

5. Ծախսերի նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» ենթահոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների, հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման կամ ծառայությունների ծախսեր: 150 000 (*մեկ հարյուր հիսուն հազար*) ՀՀ դրամը գերազանցող

գնի յուրաքանչյուր նախատեսվող սարքավորման կամ ծառայության անհրաժեշտությունը հիմնավորել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ:

6. Ծախսերի նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Գործուղումներ» ենթահոդվածով կարող են նախատեսվել գործուղումների ծախսեր: Գործուղումների համար նախատեսվող գումարը կարող է օգտագործվել ինչպես Հայաստանի և Արցախի Հանրապետություններում, այնպես էլ օտարերկրյա պետություններում գիտական միջոցառումներին մասնակցելու համար: Խմբի անդամների գործուղման նպատակը և դրա հետ կապված բոլոր ծախսերը հիմնավորել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ: Մինչև երկու շաբաթ տևողությամբ գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձը հաշվարկել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված չափերով: Երկու շաբաթը գերազանցող գործուղումների համար Խմբի անդամները կարող են հայցել ամսական մինչև 1500,0 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Խմբի յուրաքանչյուր անդամի օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը մինչև երկու ամիս է (12-ամսյա կտրվածքով):

7. Ծախսերի նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով նախատեսվում է Կազմակերպության ղեկավարի իրավասությանը թողնվող գումարը, որով տնօրենը (ռեկտորը) ապահովում է Կազմակերպության (բուհի գիտական մասի) գործունեությունը և ստեղծում Թեմայի կատարման համար անհրաժեշտ պայմաններ: Վերադիր ծախսերի համար նախատեսվող 12-ամսյա առավելագույն գումարը նախատեսել.

- 4 անձից բաղկացած խմբի համար՝ 87 000 (*ութսունյոթ հազար*) ՀՀ դրամ,
- 3 անձից բաղկացած խմբի համար՝ 65 000 (*վաթսունհինգ հազար*) ՀՀ դրամ:

Հավելված N 2.4
«Արցախի հետ համագործակցության ծրագիր-2018» մրցույթի հրավերի

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, առավելագույնը 5 միավոր (0.5 միավորի ճշտությամբ)՝ հետևյալ սկզբունքով.

5	***Գերազանց:*** *Պատասխանը լիովին համապատասխանում է առաջադրված պահանջներին և թերություններն աննշան են:*
4	***Շատ լավ:*** *Հարցի պատասխանն առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:*
3	***Լավ:*** *Պատասխանն ընդհանուր առմամբ բավարարում է առաջադրված պահանջներին, թեև կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:*
2	***Միջին:*** *Հարցի պատասխանը բավարար չէ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:*
1	***Վատ:*** *Պատասխանը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:*
0	***Շատ վատ:*** *Հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:*

Հարցաշար

1.	**Նպատակներ**: Որքանո՞վ են արժեքավոր հետազոտության նպատակները:	
2.	**Արդիականություն**: Որքանո՞վ է արդիական առաջարկվող հետազոտությունը:	
3.	**Նորույթ**: Որքանո՞վ է նոր ու հեռանկարային առաջարկվող հետազոտությունը:	
4.	**Իրագործելիություն:** Որքանո՞վ է իրատեսական առաջարկվող ժամանակահատվածում հետազոտության նպատակներին հասնելը:	
5.	**Նախագիծ:** Որքա՞ն հստակ է ձևակերպված նախագիծը:	
6.	**Համապատասխանություն:** Որքանո՞վ է նախագիծը համապատասխանում հետազոտության նպատակների ձեռքբերմանը:	
7.	**Իրականացում:** Որքանո՞վ է իրատեսական նախագծի իրականացումը:	
8.	**Առնչությունն այլ բնագավառ/մասնագիտությունների հետ:** Որքանո՞վ է նախագծի իրականացումը նպաստում տվյալ կամ հարակից բնագավառների/մասնագիտությունների առաջընթացին:	
9.	**Կարևորություն:** Որքանո՞վ է նախագիծը նորարարական իր արդյունքների հնարավոր կիրառություններով (գիտության հետագա զարգացում, տեխնոլոգիական արտադրանքների, համակարգերի և մեթոդների բարելավում, զգալի տնտեսական կամ հասարակական ազդեցություն):	
10.	**Միջազգային համագործակցություն:** Որքանո՞վ է նախագծի իրականացումն ընդգրկում միջազգային համագործակցություն:	
11.	**Իրականացման մեթոդներ:** Որքանո՞վ են նախագծում ներկայացված մեթոդները համապատասխանում հետազոտության նպատակների ձեռքբերմանը:	
12.	**Իրականացման փուլեր:** Որքանո՞վ են համապատասխանում նախագծի իրականացման փուլերը հետազոտության նպատակներին հասնելուն:	
13.	**Իրականացման փուլերի վերահսկելիություն:** Որքանո՞վ է իրատեսական նախագծի իրականացման փուլերի վերահսկելիությունը:	
14.	**Մարդկային ներուժ:** Որքանո՞վ է համապատասխանում խմբի անդամների թվաքանակն ու մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
15.	**Տեխնիկական ապահովվածություն:** Որքանո՞վ են բավարար առկա և/կամ ձեռքբերվելիք տեխնիկական միջոցները նախագծի իրականացման համար:	
16.	**Արդյունքների տնօրինում:** Որքա՞ն հստակ է ձևակերպված հետազոտության արդյունքների տնօրինումը. արդյունքների օգտագործում և տարածում (հրապարակումներ, գիտաժողովներ և այլն), նորարարական կարողության օգտագործում (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն):	
17.	**Նախահաշիվ:** Որքանո՞վ է համապատասխանում պահանջվող ֆինանսավորման ծավալը և դրա բաշխումն ըստ հոդվածների՝ հետազոտության նպատակներին հասնելուն:	
18.	**Հետազոտության ղեկավարում:** Որքանո՞վ է համապատասխանում խմբի ղեկավարի մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
19.	**Խմբի կազմ:** Որքանո՞վ է համապատասխանում մասնակիցների մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
20.	**Մինչև 35 տարեկան անձի ընդգրկվածություն:** Որքանո՞վ է համապատասխանում խմբում ընդգրկված մինչև 35 տարեկան մասնակցի մասնագիտական ուղղվածությունը նախագծի իրականացմանը:	
Մասնագիտական խորհրդի ընդհանուր գնահատական		